ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ

Խ. Հ. ԱՎԴԱԼԲԵԳՅԱՆ

Սովետական իշխանության հաստատման երկրորդ տարում՝ 1922 թ. անցկացվեց Սովետական Հայաստանի բնակչության ընդհանուր վիճակագրություն, որն ընդգրկեց 1016 բնակավայր, այդ թվում 4 քաղաք՝ Երևան, Ալեքսանդրապոլ (Լենինական), Մեծ Ղարաքիլիսա (Կիրովական) և Դիլիջան։ Սրանցից վերջին երկուսը մինչ այդ դասվում էին գյուղական բնակավայրերի շարքը։

Սովետական Հայաստանի բնակավայրերն ու բնակչությունը 1922 թ., ըստ ազգային հատկանիշի, հետևյալ պատկերն ունեին.

Ազգարնակությունը	Բնակավայրերի թիվը	%	Բնակչությունը	%
Հայեր	633	62,3	672114	86,0
Ադրբեջանցիներ	164	16,1	76932	9,8
Քրդեր	24	2,3	8528	1,1
Ռուսներ	11	1,1	19503	2,5
Հույներ	2	0,2	2565	0,3
Ասորիներ	1	0,1	2104	0,3
Խառը	181	17,9	այլք 306	—
Ընդամենը	1016	100,0	732052[2]	100,0

Բերված թվերը ցույց են տալիս, որ Սովետական Հայաստանում 1922 թ. հայերը կազմում էին հանրապետության ընդհանուր բնակչության 86%-ը, մինչդեռ զուտ հայաբնակ շեները կազմում էին բոլոր բնակավայրերի 62,3%-ը։

Արձանագրենք, որ ռուսական բնակավայրերն *ունեին ռուսական անվանումներ։ Բացառություն են կազմում Դիլիջանի մոտ հիմնված* Новый Дилижан-*ը, Լոռվա Հայ Հերհեր (Գյառ-Գյառ) գյուղի կողքին հիմնված* Русские Гергеры-*ն և Ռուսական Ախտան։ Ռուսական մեկ բնակավայր կրում էր ադրբեջանական անուն (Բազարչայ գյուղը՝ Սիսիանում)։*

Արևելյան Հայաստանում հիմնված ռուսական գաղթավայրերը մեծ մասամբ կրում էին ցարերի ու փոխարքաների անունները (Ալեքսանդրովկա, Նիկոլաևկա, Պետրովկա և այլն)։ Կովկասի առաջին փոխարքայի՝ Միխայիլ Սեմյոնովիչ Վորոնցովի անունով, հայրանունով և ազգանունով էին կնքվել Միխայլովկա, Սեմյոնովկա ու Վորոնցովկա գյուղերը։

Քրդական, հունական և ասորական բնակավայրերից *ոչ մեկը, Արևելյան Հայաստանում, չի կրել տվյալ ազգության լեզվով տրված անուն։*

Ադրբեջանական բնակավայրերն *Արևելյան Հայաստանում հիմնականում կրել են ու կրում են մայրենի լեզվով անուններ։*

Արևելյան Հայաստանի մի քանի շրջաններում, սակայն, ադրբեջանական

---

1 *Հայաստանի ազգաբնակչությունը, Երևան, 1924։*

2 *Զ. Կորկոտյան, Խորհրդային Հայաստանի բնակչությունը վերջին հարյուրամյակում (1831—1931), Երևան, 1932։*

բնակավայրերը անփոփոխ կամ աղավաղված ձևով պահպանել են հայկական հին անունները։ Ահա դրանց ոչ լրիվ ցուցակը՝ ներկայումս գործող շրջանների նշումով.

Շրջանները	Ադրբեջանական գյուղեր՝ հայկական անուններով	Բնակչությունը 1914 թ. (ադրբեջանցիներ)[3]
Ազիզբեկովի և Եղեգնաձորի	Ամաղու	350
	Առինջ	264
	Գոմուր	365
	Ջիրակ	394
	Կալասեր	154
	Մարաթուզ	248
Աշտարակի	Ագարակ	720
	Ավան	301
	Նազրվան	613
	Ուշի	1359
	Քարաշամբ	417
Բասարդեչարի	Զոդ (Սոթ)	1988
	Սատանախաչ	358
Թալինի	Ագարակ	284
	Աշնակ	477
	Թալին Ներքին	376
Գուդարքի	Արջուտ	759
Արովյանի	Ագարակ	211
	Ողջաբերդ	298
Ղափանի	Գոմարան	158
	Տանձավեր	253
Մեղրու	Թեղուտ	293
	Վարդանաձոր	653
	Թաղամիր	255
Նոր Բայազետի	Այրիվանք	739
Սիսիանի	Դաստակերտ	400
Արարատի	Արմիկ	159
	Երանոս	188
	Խոսրով	315
	Հանդ	297

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին (1914 թ.) Սովետական Հայաստանի ընդգրկած սահմաններում հայկական բնակավայրերի թիվը հասնում էր 531-ի, որից միայն 220-ը կամ 41% ունեին հայկական, իսկ 311-ը կամ 59% կրում էին թուրքական, պարսկական և այլ անուններ։

Սովետական Հայաստանի 34 շրջանից 10-ը (առանց Աշտարակի ու Լոռվայքի) ընկած են Փոքր Կովկասյան լեռների գլխավորապես անտառապատ լանջվածներում։ Այս լեռնաշխարհում էին Լոռին, Իջևան-Շամշադինն ու Ջանդեղուրը։ Շահ-Աբբասը, որ 1604 թ. գրեթե ամայի դարձրեց ամբողջ Արարատյան դաշտը և հայերին գերեվարեց Պարսկաստանի խորքերը, չկարողացավ տեղահան անել լեռնային այս երկրամասերի հայերին, որոնք պատմական նույնիսկ ամենածանր պայմաններում կարողացան պահպանել իրենց ազգային դեմքը նաև բնակավայրերի անունների գծով։ Հենց այդ շրջաններին

[3] Кавказский календарь на 1915.

է բաժին ընկնում զուտ հայաբնակ ու հայանուն 220 բնակավայրերից 156-ը կամ 70%-ը։

Մնացած շրջաններին բաժին է ընկնում հայանուն ընդամենը 64 բնակավայր կամ 30%-ը։ Ռուսաստանին միացվելու պահին (1828 թ.) այս վերջին շրջաններից շատերը հայ բնակչությունից գրեթե զուրկ էին, մյուսներում էլ հայերը չնչին տոկոս էին կազմում։

Մեր կազմած մհալային և գյուղական ցուցակներից երևում է, որ 1928 թ. Գյոկչայի մհալում (Սևանի ամբողջ ավազանում) 2 հայկական գյուղ էր մնացել՝ Երանոսը 13 ծուխ՝ 81 մարդ և Գոմաձորը 20 ծուխ՝ 142 բնակիչով։ Ամբողջ Ասլարանում կանգուն մնացած հայկական միակ գյուղը Խմբլուն էր՝ 1 ծուխ՝ 9 բնակիչով. Վեդիբասարի մհալում միայն Վեդի գյուղում կար 2 ծուխ՝ 15 մարդ հայ բնակչություն, ամբողջ Գառնիբասարի մհալում՝ 4 գյուղ 78 ծուխ՝ 335 մարդ, Ախտալի շրջանի սահմաններում՝ 3 գյուղ 34 ծուխ՝ 145 մարդ բնակչությամբ։

Պարսկահայերի ու արևմտահայերի՝ 1829—1831 թթ. մեծ ներգաղթն զգալիորեն բարձրացրեց հայ բնակչության տեսակարար կշիռն ամբողջ Արևելյան Հայաստանի բնակչության կազմում։ Ահա այդ փոփոխությունն արտահայտող տվյալները[4]։

Արևելյան Հայաստանի ազգաբնակությունը Ռուսաստանին միացվելուց առաջ և միացվելուց հետո

Ժամանակաշրջանը	Բնակավայրերը	Հայեր
Ռուսաստանին միացվելուց առաջ՝ 1827 թ.	1058	80295
	%	40,5
Ռուսաստանին միացվելուց հետո՝ 1831 թ.	1267	167068
	%	61,5

Աղյուսակը ցույց է տալիս, որ արևմտահայերի ու պարսկահայերի մեծ ներգաղթի շնորհիվ Արևելյան Հայաստանում հայերի թիվը ավելի քան կրկնապատկվել է, հասնելով 167068 մարդու (61,5%)՝ նախկին 80295-ի (40,5%-ի դիմաց)։ Այդպիսով՝ հայերը բացարձակ մեծամասնություն են կազմել հայրենի երկրում։

Դրանով հանդերձ՝ Արևելյան Հայաստան ներգաղթած գյուղացիական գանգվածները չեն կարողացել վերականգնել բնակավայրերի հայկական հին անունները կամ մշակել հայկական նոր անուններ՝ հիմք ընդունելով բնակավայրերին բնորոշ հատկանիշները։ Բացի այդ, խառը բնակչություն ունեցող բնակավայրերից շատերը կրում էին թուրք-պարսկական անուններ, բայց մենք հաշվել ենք հայ-ադրբեջանական խառը բնակչություն ունեցող 16 բնակավայր հայկական հին անուններով, որոնց թվում առանձնապես հիշատակելի են՝ Ղազար Փարպեցու ծննդավայր Փարպի գյուղն Աշտարակի շրջանում, Գրիգոր Մագիստրոսի ծննդավայր Բջնին՝ Հրազդանի շրջանում, Ջրվեժը՝ Կոտայքում և այլն։

Խառը բնակչություն ունեին նաև Երևանը և Կումայրին (Գյումրին)։

---

4 Քաղել ենք 1829—1831 թթ. «Կամերալ ցուցակագրություններից», որոնք գտնվում են Հայկական ՍՍՀ և Վրացական ՍՍՀ պետական կենտրոնական արխիվներում։

Ցարական կառավարությունը Երևանը վերանվանել էր Эривань, իսկ Կումայրին՝ Ալեքսանդրապոլ։

Սովետական իրավակարգի հաստատումը Հայաստանին բերեց խաղաղ կյանքի ու զարգացման լայն հնարավորություններ։ Իրենց լքված գյուղերը վերադարձան երկրից վտարված կամ ակամա փախած ադրբեջանցիներ։ Հայրենի բնակավայրերը վերադարձան Վրաստանում ու Ռուսաստանում ապավինված բյուրավոր հայեր։

Ագրարային բարեփոխումը գյուղեր հատկացրեց, նոր շեներ հիմնեց ու բնիկներին համահավասար հիմունքներով հողաբաժիններ շնորհեց արևմտահայ հազարավոր գաղթականների։ Ամենուրեք աստիճանաբար, բայց հետևողականորեն, վերացվում էր հինը, կառուցվում կենսունակ նորը։

Ստեղծագործական աշխատանքի և բուռն շինարարության պայմաններում առաջին քայլերն են արվել նաև բնակավայրերի անունների փոփոխման ուղղությամբ։

Այս կարգով նոր անուն ստացած բնակավայրերի թիվը հասնում է 79-ի, որի մեջ պետք է հաշվել մի շարք վերականգնված հայկական հին անուններ։ Ահա մի փոքրիկ ցանկ այդ փոփոխություններից[5].

Շրջանները	Բնակավայրերի անունները	
	Նախկին	Նոր
Ազիզբեկովի	Քյոթանլու	Կարմրաշեն
Հրազդանի	Դարալիչակ	Ծաղկաձոր
Ապարանի	Բարաքիշի	Բուժական
Արտաշատի	Այասլու	Այգեստան
Արտաշատի	Կարահամզալու	Բուրաստան
Բասարգեչարի	Հյուսեին-Կուլի Աղալու	Նարիմանլու
Էջմիածնի	Մոլլա Դուրսուն	Շահումյան
Թալինի	Բազիրխանա	Ջիթհանքով
»	Բախչաջուղ	Պարտիզակ
Իջևանի	Քարվանսարա	Իջևան
Կրասնոսելսկի	Միխայլովկա	Կրասնոսելսկ
Մարտունու	Կարանլուղ Ն.	Մարտունի
Շամշադինի	Թովուզկալա	Բերդ
Ղափանի	Քրդիքենդ	Լեռնաձոր
Ստեփանավանի	Ջալալ-օղլի	Ստեփանավան
»	Ռուս Գյաուգյաո	Պուշկինո
Արթիկի	Քյավթառլու	Փանիկ
Նոյեմբերյանի	Աղզիրարա	Ոսկեպար

Մեր նախաձեռնության արդյունքն են հողաշինարարական կարգով հիմնված մի շարք նոր գյուղերի անուններ, ինչպես օրինակ՝ Արտաշատի շրջանի Դիտակն ու Քաղցրաշենը, Բասարգեչարի՝ Նորակերտը՝ Էջմիածնի՝ Աղատաշենն ու Դաշտը, Հոկտեմբերյանի՝ Բերքաշատը, Նորապատն ու Ջրաշենը և այլն։

Վերոհիշյալ տեղական նախաձեռնություններից բացի՝ Սովետական Հայաստանի բնակավայրերի անունների փոփոխությունները կատարվել են օրենսդրական կարգով՝ ՀՍՍՀ Կենտգործկոմի ու Գերագույն սովետի նախագահության հետևյալ հրամանագրերով.

---

5 «Հայկական ՍՍՌ վարչատերիտորիալ բաժանումը», Երևան, 1948։

Հրամանագրերի տարեթիվը	Հրամանագրերի ամսաթիվը												Փոխված անունների թիվը
	հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	
1924	27												1
1925	3												97
1938	4		26								4	27	10
1939		32	2		4					22			16
1940			2	11		1	24		28				32
1941							5						1
1945			12				30	20	4 և 7			7	46
1946			1	1 և 4	31		15	12	10		12		134
1947				26									17
1948—1959		3		10									93

Ընդամենը օրենսդրական կարգով առ 1959 թ. փոխված անուններ 447

Ինչպես երևում է աղյուսակից՝ Սովետական Հայաստանի բնակավայրերի անունների փոփոխման օրենսդրական առաջին ակտը Հայկենտգործկոմի նախագահության 1924 թ. հունվարի 27-ի հրամանագիրն է, որի մասին Ալեքսանդրապոլի գավառային գործկոմին ու գավառային կոմիտեին ուղարկված հեռագրում ասված է.

«Կենտգործկոմի և ժողկոմխորհի նախագահության որոշումով Ալեքսանդրապոլ անունը փոխվում է Լենինականի։

Հայտարարեցեք բանվորներին և աշխատավոր մասսաներին, որ իրենց հեղափոխական գործով նրանք պետք է քաղաքի հռչակը հավասարազոր պահեն Լենինի անվանը։

Հավերժ հիշատակ ընկեր Լենինին։

Կեցցե ընդմիշտ Լենինականը։

ՀԿԳԿ նախագահի տեղակալ՝ Հ. ԱԶԱՏՅԱՆ
ՀԺԿԽ նախագահի տեղակալ՝ Ա. ՄՈՒԱՎՅԱՆ»[6]

Օրենսդրական երկրորդ ակտը Հայկենտգործկոմի նախագահության 1925 թ. հունվարի 3-ի հրամանագիրն է, որով փոխվել են 97 բնակավայրերի անուններ, այդ թվում՝ Մեծ Ղարաքիլիսան անվանվել է Կիրովական։

Այնուհետև մինչև 1959 թ. հրապարակված 31 հրամանագրերով փոխվել էն 349 բնակավայրերի անուններ։

Օրենսդրական կարգով փոխված անունների թիվը հասնում է 447-ի, որ կազմում է Սովետական Հայաստանի բնակավայրերի 40%-ը։

Սովետական Հայաստանի բնակավայրերի փոփոխված անունների առթիվ նախ պետք է նկատել, որ դգալի թվով բնակավայրեր ստացել են իրենց արտադրական, աշխարհագրական, պատմական և այլ տվյալներին համա-

6 «Խորհրդային Հայաստան», 30. 1. 1924։

պատասխանող շատ հաջող, հնչեղ ու կարճ անուններ, որ հրճվանքով են ընդունել ամենքը, մանավանդ տեղի բնակիչները։

Ահա նոր ու հաջող անուններ ստացած բնակավայրերի ոչ լրիվ մի ցանկ

Նոր անունը	Նախկին անունը	Շրջանը
Ախուրիկ	Թուրքի Ղարաքիլիսա	Ախուրյան
Ակունք	Գյոզլու	Թալին
Այգեշատ	Հաշիղարա	Էջմիածին
Արմավիր	Ղուրդուղուլի	Հոկտեմբերյան
Արևշատ	Աղբաշ ներքին	Արտաշատ
Արշալույս	Քորփալու	Էջմիածին
Բամբակաշատ	Մոլլա Բայազիտ	Հոկտեմբերյան
Բառոժ (քրդական)	Դուզքենդ	Թալին
Գանձակ	Սնգիչա	Եղեգնաձոր
Գլաձոր	Օրթաքենդ	Եղեգնաձոր
Գյոզալդարա (ադրբ.)	Խանջուդազ	Կիրովական
Գյունեյ (ադրբ.)	Սատանախաչ	Բասարգեչար
Դալար	Դալուլար	Արտաշատ
Դեբետ	Խաչիդյուղ	Գուգարք
Եղեգնուտ	Մոլլա Բաղալ	Հոկտեմբերյան
Եղնիկ	Դաղալու	Թալին
Զառքենդ (ադրբ.)	Զարգիբիլ	Բասարգեչար
Զովաշեն	Քեշիշվերան	Արարատ
Լանվիկ	Մուսլուղլի	Անի
Լճաշեն	Օրդակլու	Սևան
Լուսաձոր	Խավարաձոր	Իջևան
Խնձորուտ	Ալմալու	Ազիզբեկով
Ծաղկահովիտ	Հաջի խալիլ	Ապարան
Կապուտան	Գյոքիլիսա	Կոտայք
Կարմրավան	Կզլքիլիսա հայ.	Ղուկասյան
Հացիկ	Թոփաղլի	Ախուրյան
Մանթաշ	Արխվալի	Արթիկ
Մաբալիկ	Մոլլա Գյոդչա	Անի
Մարմաշեն	Ղանլիչա վեր.	Ախուրյան
Մարմարիկ	Փաշաքենդ	Հրազդան
Մեծամոր	Ղամարլու	Էջմիածին
Մեղրաձոր	Թոյչարուխ	Հրազդան
Մրգաստան	Հաջիլար	Էջմիածին
Շատին	Հասանբեկենդ	Եղեգնաձոր
Շենիկ	Մաղարաշուղ	Թալին
Շուրաբադ (ադրբ.)	Սուլթանարադ	Ամասիա
Ոսկեվազ	Կզլթամուր	Աշտարակ
Ոսկեթաս	Կուլդարվիշ	Թալին
Սալվարդ	Ալիլու	Սիսիան
Սասունիկ	Կարաչալար	Աշտարակ
Սարալանջ	Բաշգյուղ	Արթիկ
Սևան	Ելենովկա	Սևան
Սորիկ (քրդ.)	Զոռբա	Թալին
Վաղաշեն[7]	Ավդալաղալու	Մարտունի
Վարդաշեն	Մեհրաբլու	Արարատ
Պեմզաշեն	Մահմուդջուղ	Արթիկ
Քուչակ	Ալիքուչակ	Ապարան

[7] Ընդգծված անուններն առաջադրվել են մեր կողմից։

Հիշատակված հաջող անունների թիվը կարելի է հասցնել մոտ 200-ի։

Բնակավայրերի նոր անունների զգալի մասը քննադատության չի դիմանում։

Ինչպես հայտնի է, մեր լեզուն դարերի ընթացքում կերտել է բնակավայրերի անունների շատ հարուստ, անզուգական վերջավորություններ։ Ահա դրանց ոչ լրիվ ցուցակը.

Վերջավորություններ	Օրինակներ		
շատ	Աշտիշատ	Արտաշատ	Ջարիշատ
շեն	Լեռնաշեն	Մարմաշեն	Նորաշեն
ձոր	Գոմաձոր	Ծաղկաձոր	Հալիձոր
գեղ, գյուղ	Ափնագեղ	Կոթիգեղ	Զորագյուղ
տուն	Աղավնատուն	Անդեղատուն	Երիցտուն
անց	Խնդրանց	Ավարանց	Քաջարանց
թաղ	Գետաթաղ	Հայթաղ	Շենաթաղ
ական	Արդական	Բյուրական	Օշական
ապատ	Նորապատ	Սարդարապատ	Վաղարշապատ
ավան	Աղատավան	Արշակավան	Շիրակավան
արան	Բագարան	Գոդարան	Ապարան
բերդ	Անբերդ	Ծիծեռնակաբերդ	Ողջաբերդ
կերտ	Ալաշկերտ	Մանազկերտ	Նորակերտ
ստան	Այգեստան	Բուրաստան	Մրգաստան
ին	Դվին	Թալին	Կարին
ուն	Բռուն	Հասուն	Սասուն
ուտ	Լոռուտ	Շամուտ	Տանձուտ
ակ	Աղարակ	Գանձակ	Սոլակ
իկ	Արթիկ	Գնիշիկ	Մարալիկ

Այս ցուցակն հիացմունք է առաջացնում անունների կերտվածքով ու վերջավորությունների կայուն սիստեմով։

Ճիշտ հակառակ պատկեր են ներկայացնում մի խումբ նոր անուններ, որոնցից, մեր կարծիքով, առանձնապես անընդունելի են ստորև հիշատակվածները[8]

Բնակավայրերի նոր անունները

Նախնական սեռական հոլովով	Անհաջող վերջավորություններ	Լեզվական սխալներ	Անհաջող անուններ
Արայի	Աղատան	Բարձրունի	Այգաբաց
Առափի	Ակներ	Ջովունի	Ապագա
Գետափի	Գեղադիր	Հովունի	Ավաղան
Ջրափի	Գետք	Մեղրուտ	Արեգ
Վահաղնի	Հայրենյաց	Վարդենիս	
		Վարդենուտ	

Սովետական Հայաստանի բնակավայրերի մեջ մենք ունենք «ի» վերջավորությամբ մի քանի անուններ՝ Կարբի, Ուշի, Փարպի։ Սակայն դրանք ուղղական հոլովով սկզբնական ձևեր են, ինչպես գինի, գարի, կենդանի բառերը, որոնց նման և հոլովվում են։

Այդպես չեն առաջին սյունակում հիշատակված անունները, որոնց սկզբ-

8 Տե՛ս «ՀՍՍՌ վարչա-տերիտորիալ բաժանումը», Տեղեկագիր, Երևան, 1955, էջ 81—94։

նական ձևը տրված է նույն անունների արմատը կազմող բառերի սեռական հոլովով՝ Արայի, Գետափի, Վահագնի...։

Բնակավայրերի խիստ անհաջող անունների դեմ կբողոքեն դրանք կրող գյուղերի նույնիսկ դպրոցականները, քանի որ նրանք քերականության ոչ մի դասագրքի մեջ որևէ բացատրություն չեն գտնի նման թխովի գոյականների հոլովման մասին։

Երրորդ այունակի անունների մասին պետք է նկատել հետևյալը.

ա) Հնում տոհմանուններից շատերին տրված էր «ունի» վերջավորությունը՝ Արշակունի, Պահլավունի, Վարաժնունի և այլն։ Այժմ էլ կան նույն վերջավորություններով աղգանուններ՝ Արծրունի, Բագրատունի, Հայկունի և այլն։

Այստեղից ելնելով՝ սխալ պիտի համարել ունի վերջավորությունը բնակավայրերի անուններին շնորհելը՝ Բարձրունի, Զովունի, Հովունի, քանի որ նման ոչ մի օրինակ չկա և ոչ մի տեղ։

բ) Տեղանուններն ուտ վերջավորություն են ունենում բուսատեսակների կապակցությամբ՝ Բարդուտ, Լորուտ, Տանձուտ, Եղեգնուտ և այլն։

Մեղրը բույս չէ, ուրեմն Մեղրուտ տեղանուն չի կարող լինել, այլ կլինի Մեղրաշեն, Մեղրաձոր և այլն։

գ) Այս միևնույն բացատրության հիման վրա պետք է ասվի Վարդուտ, բայց ոչ երբեք՝ Վարդենիս։

դ) Զորրորդ այունակում բերված նոր անուններն ու դրանց նման շատերը ոչնչով չեն հիմնավորվում։

Այդ կարգի նոր անունները՝ Այգաբաց, Ապագա, Ավազան և այլն, ոչ մի կապ չունեն այդ անուններով կնքված վայրերի աշխարհագրության, արտադրության կամ պատմության հետ։

Արևելյան Հայաստանի բնակավայրերի անունների խոշոր թերություններից են կրկնությունները։ Սովետական Հայաստանում 526 բնակավայրեր տեղական նախաձեռնությամբ և օրենսդրական կարգով նոր անուններ ստանալուց հետո՝ բնակավայրերի անունների կրկնությունները ոչ միայն չվերացան կամ չպակասեցին, այլ ավելի շատացան։

Սովետական Հայաստանում, ներկայումս երեք և ավելի անգամ կրկնվող անունների մասին հետևյալ տվյալներն ունենք[9].

Կրկնվող անունների թիվը	Մեկ անունը քանի անգամ է կրկնվում	Նույնանուն-համանուն բնակավայրերի թիվը
17	3 անգամ	51
1	4 »	4
8	5 »	40
4	6 »	24
1	7 »	7
2	8 »	16
1	9 »	9
4	10 »	40
2	11 »	22
1	12 »	12
1	13 »	13
1	14 »	14
1	23 »	23
Ընդամենը 44	—	275

9 «Հայկական ՍՍՀ վարչա-տերիտորիալ բաժանումը առ 1-ը մայիսի 1971 թ.». Երևան, 1971, էջ 228—240։

Աղյուսակը ցույց է տալիս, որ Սովետական Հայաստանի բնակավայրերից 275-ը չունեն իրենց առանձին անունները, այլ երեք և ավելի թվով բնակավայրերի հետ նույնանուն կամ համանուն են՝ կրելով զանազան ձևափոխություններով մատուցված 44 անուն...

Օրենսդրական կարգով ու գործնականում ոչ մի սահմանի մեջ չդրված այդ կրկնությունների մասին ճիշտ պատկերացում տալու համար բերենք կրկնվող անունների չորս խումբ միայն[10]։

Բնակավայրերի զուգող անունը	Նախկին անունը	Շրջանը
Ա. ԽՈՒՄԲ		
Նորարեր	Քյալալի	Անիի
Նորաղավիթ	—	Շահումյանի
Նորաղուղ	—	Կամոյի
Նորակերտ	Նոր	Բասարդեչարի
Նորակերտ	Նոր	Էջմիածնի
Նորաղբյուր	Մրնբխ	Ղուկասյանի
Նորաշեն	—	Ապարանի
Նորաշեն	Սաչլու	Ապարանի
Նորաշեն	Դվին—Քյուրքենդ	Արտաշատի
Նորաշեն	Մեհրաբ »	Արտաշատի
Նորաշեն	—	Արթիկի
Նորաշեն	Բողդանովկա	Կալինինոյի
Նորաշեն	Էֆենդի	Սևանի
Նորաշեն	—	Շամշադինի
Նորաշենիկ	—	Ղափանի
Նորապատ	Նոր	Հոկտեմբերյանի
Նորավան	Նոր	Սիսիանի
Նոր Արեշ	Նոր	Շահումյանի
Նոր Արևելք	Գուլ	Մեղրու
Նոր Արթիկ	Նոր	Թալինի
Նոր Արմավիր	Նոր	Հոկտեմբերյանի
Նոր Բաշգյուղ	Նոր	Կրասնոսելսկի
Նոր գյուղ	Նոր	Կոտայքի
Նոր կյանք	Մաթլի	Արթիկի
Նոր կյանք	Նոր	Արարատի
Նոր Կողբ	Խարաբա-Սարվանլար	Շահումյանի
Նոր Ջրաշեն	Նոր	Արտաշատի
Բ. ԽՈՒՄԲ		
Ծաղկահովիտ	Հաջի խալիլ	Ապարանի
Ծաղկաձոր	Դարաչիչակ	Հրազդանի
Ծաղկաշատ	Նոր	Թումանյանի
Ծաղկաշեն	Կարաղաղլու	Արտաշատի
Ծաղկաշեն	Թաքյաուլու	Ապարանի
Ծաղկաշեն	Քոռաղբյուր	Ղուկասյանի
Ծաղկաշեն	Քյարիմքենդ	Կամոյի
Ծաղկաշեն	Ավդիրեկ	Սպիտակի
Ծաղկասար	Խանվալի	Ախուրյանի
Ծաղկասար	Փիրթիքյան Վ.	Թալինի
Ծաղկավան	Մելիքգյուղ	Իջևանի

10 Նույն տեղում։

Ծաղկավան	Վելիգյուղ	Սամշադինի
Ծաղկունք	—	Սևանի
Ծաղկունք	Այնալու Վ.	Էջմիածնի
Գ. ԽՈՒՄԲ		
Սարագյուղ	Դարաքյոյ	Ղուկասյանի
Սարալանջ	Թուլնաբի	Աշտարակի
Սարալանջ	Հաջի Բաղր	Ապարանի
Սարալանջ	Բաշգյուղ	Արթիկի
Սարալանջ	Գոյ-Ցոխուշ	Սպիտակի
Սարակապ	Բոգդոդան	Անիի
Սարահարթ	Գյուլլիջա	Սպիտակի
Սարամեջ	Ջոթուր	Սպիտակի
Սարանիստ	Քութիա	Կոտայքի
Սարատակ	Իմրիան	Արթիկի
Սարապատ	Սամբոլու	Ղուկասյանի
Սարիգյուղ	Սոիգեղ (Կլիչքենդ)	Իջևանի
Դ. ԽՈՒՄԲ		
Ակներ	Որնակ	Թումանյանի
Ակունք	Կոխբուլաղ	Բասարգեչարի
Ակունք	Գյոդլու	Թալինի
Ակունք	Բաշգյուղ	Կոտայքի

Երբ սրան հակադրում ենք Սովետական Հայաստանի աշխարհագրական բազմազանությունը, արտադրական հարստությունները, պատմական համասփյուռ հուշարձանները, մանավանդ մեր լեզվի ճոխությունն ու ճկունությունը, ապա հրամայական-անհետաձգելի պահանջ է առաջանում՝

ա) Կարելույն չափ շուտ ազատվել անհաջող անուններից, հատկապես կրկնություններից։

բ) Սովետական Հայաստանի բոլոր բնակավայրերի այժմ գործող անունները կարգավորել, իսկ մնացածների համար նախագծել աշխարհագրական, արտադրական, պատմական, կամ այլ տվյալներով հիմնավորված կարճ ու բաբեհունչ անուններ, նշանաբան ընդունելով՝ **մեկ անունը մեկ բնակավայրի սկզբունքը։**

գ) Բնակավայրերի փոփոխված անունների նոր ցուցակը հաստատող հրենագրական ակտի մեջ հատուկ հոդվածով սահմանել, որ հետագայում որևէ բնակավայրի անվանափոխությունը կարող է կատարվել ՀՍՍՀ Գերագույն սովետի նախագահության հաստատմամբ միայն։

НАИМЕНОВАНИЯ НАСЕЛЕННЫХ ПУНКТОВ СОВЕТСКОЙ АРМЕНИИ

Х. А. АВДАЛБЕКЯН

Резюме

В последние годы многие населенные пункты Советской Армении были переименованы. Сделано это в основном правильно. Неудачные же и часто повторяющиеся названия следует заменить новыми, исходя из географических, исторических, производственных и прочих аспектов каждого населенного пункта.